

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ԶԿ-ՀՄԱԱՇՁԲ-23/1-Ա**

ք. Երևան

«12» 06 2023թ.

«Ջրային կոմիտեն», ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Ղազարյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Է. Աբրահամյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված այլ շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքներ- ՀՀ Լոռու մարզի Մեծավանի ջրամբարի վերականգնման և վերազինման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձարել դրա համար:

աշխատանքի անվանումը

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն նախագծային փաստաթղթերի 7 ամիս:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.**

**1.3.2.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,**

**1.3.2.2 շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պարասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:**

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

### **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

### **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված, որը նախատեսված է նախագծային փաստաթղթերում: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 2.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

#### **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 117 946 639 (մեկ հարյուր տասնյոթ միլիոն ինը հարյուր քառասունվեց հազար վեց հարյուր երեսունինը) ՀՀ դրամ, որից 19 657 773 (տասնինը միլիոն վեց հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ ապահովել է շինարարության կազմակերպման նախագծով աշխատանքների մեկնարկման փուլում նախատեսված միջոցառումները (շինհրապարակի կազմակերպումը), որը պետք է գրավոր հավաստված լինի տվյալ օբյեկտի տեխնիկական հսկողությունն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագրի կնքած կազմակերպության կողմից:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (գրո ամբողջ հինգ տասներորդական)

տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

**Նորմատիվ բնույթ չկրող մեթոդական ցուցում**

**ՀՀ կառավարության 08.12.2022թ. N 1885-Ն որոշմամբ սահմանված կարգավորումների կիրառման վերաբերյալ հիդրոտեխնիկական կառույցների հետ կապված աշխատանքների Կապալային աշխատանքների գնման պայմանագրով սահմանվող պատասխանատվության միջոցներ**

N	Խախտումը	Պատասխանատվությունը *
1	Շինարարական օբյեկտի նախապատրաստումը չի նախատեսել ինժեներատեխնիկական անձնակազմի կողմից նախագծային փաստաթղթերի ուսումնասիրություն, շինարարության պայմաններին մանրազննին ծանոթություն, արտահրապարակային ու ներհրապարակային նախապատրաստական աշխատանքներ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
2	Չի կանխվել վերգետնյա և/կամ ստորգետնյա ջրային ռեսուրսների աղտոտումը շինարարական աղբից, չվարակազերծված ջրերից, նավթամթերքներից, քիմիկատներից	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 1 տոկոսի չափով
3	Վտանգավոր տեղամասը չի ցանկապատվել (պահպանական, պաշտպանական կամ ազդանշանային սարքերի, սարքավորումների, գովազդային վահանակների կիրառմամբ)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
4	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագրի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
5	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
6	Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն առաջին բուժօգնության և հակահրդեհային միջոցները	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
7	Գրունտի հանույթից առաջացած ավելցուկային նյութը և հողի վերին շերտը չեն տեղափոխվում և պահվում հատուկ նախատեսված վայրերում	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
8	Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված դեպքերում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
9	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
10	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

	գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	
11	Շինարարական աշխատանքների ընթացքում չի լրացվել աշխատանքների վարման մատյանը, չի կազմվել ծածկված աշխատանքների փաստագրման, կարևոր կոնստրուկցիաների ընդունման միջանկյալ (սարքավորումների, համակարգերի, ցանցերի) ու փորձարկման ակտերը	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
12	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
13	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
14	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
15	Շինարարական նյութերը և թափոնները չեն տեղափոխվում ծածկված բեռնատարներով	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
16	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

1. Սույն աղյուսակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա:

\* 2. Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 4-րդ ենթակետի.

1) տուգանքի չափը չի կարող պակաս լինել պայմանագրի ընդհանուր գնի 0.5 տոկոսից.

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին

ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 39 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 2.1, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ջրային կոմիտե  
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա  
Հ/Հ 900011034288  
ՀՎՀՀ 02555816  
Էլ. փոստի ցարտուղար



Ա. ՂԱԶԱՐՅԱՆ  
(նախագրություն)  
Կ. Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Մեդիսոն Էյբլ» ՍՊԸ  
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ա. Ահարոնյան 52, քն.43  
հեռ. +374 99 909009  
Բանկը «Կոնվերս բանկ» ՓԲԸ  
Հ/Հ 19300963617900  
ՀՎՀՀ 01012522  
Էլ. Հասցե medison-eybl@mail.ru  
Տնօրեն



Է. Արրահամյան  
Կ.Տ./ստորագրություն/

**ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ\***

**«ԱՅԼ ՇԵՆՔԵՐԻ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ-ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆԻ ԶՐԱՄԲԱՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ և ՎԵՐԱԶԻՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի արժեքը, հազ.դրամ (թվերով)	Ընդհանուր արժեքը, հազ.դրամ (թվերով)
1	2	3	4	5	6.000
	<b><u>1. Հեղեղային ցրիեր</u></b>				
	<b><u>Նախապատրաստական աշխատանքներ</u></b>				
1.1	Հեղեղատարի հատակի բերվածքների մաքրում բուլդոզերով 59կվտ / անիվային/ տեղափոխումով մինչև 10մ կուտակումով	մ <sup>3</sup>	67	2.000	134.000
1.2	Բերվածքների մաքրում ձեռքով կողեզրի հատվածում 15սմ կայնությամբ երկու կողմից կուտակումով	մ <sup>3</sup>	3	10.000	30.000
1.3	Կուտակված բերվածքների բարձուն ինքնաթափ էքսկավատորով	մ <sup>3</sup>	70	1.000	70.000
1.4	Բարձված բերվածքների տեղափոխում ինքնաթափերով 15կմ թափոնավայր	տ	112	3.000	336.000
1.5	Գոյություն ունեցող հավաքովի երկաթբետոնե սալերի ապամոնտաժ ջրթափային խրամուղու շուրջը 1մ լայնությամբ հատվածում	մ <sup>3</sup>	11.8	0.200	2.360
1.6	Ապամոնտաժված սալերի բարձուն ինքնաթափ	տ	28.320	0.100	2.832
1.7	Գոյություն ունեցող հավաքովի երկաթբետոնե սալերի ապամոնտաժ էքսկավատորով ջրթափային խրամուղու շուրջը 4մ լայնությամբ հատվածում, /բարձունով/	մ <sup>3</sup>	47.2	0.100	4.720
1.8	Բարձված սալերի տեղափոխում ինքնաթափերով 15կմ թափոնավայր	տ	141.6	0.200	28.320
1.9	Գոյություն ունեցող աջ հողմնահարված բետոնային պատի քանդում ձեռքով հետահար մուրճով / 10% մանրեցում/	մ <sup>3</sup>	13.8	20.000	276.000
1.10	Քանդված բետոնի թափոնների բարձուն ինքնաթափ	տ	30.360	3.000	91.080

1.11	Գոյություն ունեցող հողմնահարված բետոնե պատի քանդում էքսկավատորով բարձունով	մ <sup>3</sup>	124.2	2.000	248.400
1.12	Բարձված բետոնի թափոնների տեղափոխում ինքնաթափերով 15կմ թափոնավայր	տ	303.6	2.800	850.080
1.13	Գոյություն ունեցող կարերի կազմակում /հավաքովի ե.բետոնե խողովակների շինարարական կարեր 92հատ/	մ	368.00	0.400	147.200
1.14	Գոյություն ունեցող և նոր երեսապատման հատվածում բետոնե հատակի քանդում	մ <sup>3</sup>	0.5	27.000	13.500
1.15	Քանդված կարերի և բետոնի թափոնների բարձում ինքնաթափ	տ	4.000	0.500	2.000
1.16	Բարձված կարերի և բետոնի թափոնների տեղափոխում ինքնաթափերով 15կմ թափոնավայր	տ	5.1	2.020	10.300
	<b>Ընդամենը ըստ նախապատրաստական շրջանի</b>			0.000	2246.792
	<i><u>Յոդային աշխատանքներ</u></i>				
1.17	IV կարգի բնահողերի կտրում բուլդոզերով տեղափոխումով մինչև 10մ կուտակումով	մ <sup>3</sup>	416.6	0.500	208.300
1.18	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով ջրթափային խրամուղու անմիջական հպման հատվածներում 0.1մ լայնությամբ	մ <sup>3</sup>	17.4	5.000	86.800
1.19	Քանդած բնահողերի բարձում ինքնաթափ էքսկավատորով / III կարգի/	մ <sup>3</sup>	326.6	0.600	195.960
1.20	Բարձված բնահողերի տեղափոխում ինքնաթափերով 0.5կմ թափոնավայր	տ	587.88	0.010	5.879
1.21	IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողիցքով փոսորակի ստեղծումով	մ <sup>3</sup>	29	0.500	14.500
1.22	IV կարգի բնահողերի քանդում ձեռքով փոսորակի հատակի լրամշակում	մ <sup>3</sup>	1.6	5.000	8.000
1.23	Չետլիցքի իրականացում ձեռքով օգտակար հանույթի փափուկ բնահողերով, տոփանումով	մ <sup>3</sup>	27.60	1.200	33.120
1.24	Չետլիցքի իրականացում բուլդոզերով օգտակար հանույթի բնահողերով	մ <sup>3</sup>	110.40	0.070	7.728
1.25	Չետլիցքի տոփանում ձեռքի պնեվմատոփիչներով	մ <sup>3</sup>	110.4	1.000	110.400
1.26	Քարերի հավաքում էքսկավատորով բարձումով	մ <sup>3</sup>	35.35	0.100	3.535
1.27	Բարձված քարերի տեղափոխում ինքնաթափերով 1կմ տեղադրման հատված	տ	77.77	0.100	7.777
1.28	Քարե լիցքի իրականացում բուլդոզերով	մ <sup>3</sup>	24.50	0.050	1.225

1.29	Քարե լիցքի իրականացում քարերի շարվածքով վերին շերտում / выкладка камня/	մ <sup>3</sup>	10.5	0.400	4.200
	<b>Ընդամենը ըստ հողային աշխատանքերի</b>				<b>687.424</b>
	<i><u>Բետոնային աշխատանքեր</u></i>				
1.30	Գոյություն ունեցող բետոնի մակերևույթի մաքրում	մ <sup>2</sup>	1500.00	0.300	450.000
1.31	Ջրանցքի միաձույլ բետոնե պատերի կառուցում միաձույլ բետոնից, B15, F150, W4, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ <sup>3</sup>	167.00	60.000	10020.000
1.32	Միաձույլ բետոնե օձիք, B15, F150 դասի բետոնից, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ <sup>3</sup>	16.4	45.000	738.000
1.33	Հեղեղատարի հատակի ստեղծում միաձույլ բետոնից, B20, F150, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ <sup>3</sup>	150.00	168.000	25200.000
1.34	Ջրթափային և խուլ պատերի շուրջը հարթակի ստեղծում միաձույլ B15, F150, W4 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ <sup>3</sup>	135.50	45.000	6097.500
1.35	Նախապատրաստական շերտի ստեղծում միաձույլ B7.5, F150 դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ <sup>3</sup>	47.00	46.000	2162.000
1.36	Փ25մմ L=250մմ անցքերի գայլիկոնում գոյություն ունեցող բետոնի մեջ	հատ	12	0.500	6.000
1.37	Ցեմենտե շաղախ, արժեք, մատակարարում և լցում գայլիկոնված անցքերի մեջ	մ <sup>3</sup>	0.0006	100.000	0.060
1.38	Կցածողեր Փ20մմ AIII դասի ամրանից , արժեք, մատակարարում, տեղադրում / 12հատ, L=0.5մ/	տ	0.0148	600.000	8.880
1.39	Կար №1-ի ստեղծում L=0.1մ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ	316.7	1.000	316.700
1.40	Կար №1-ի ստեղծում L=0.3մ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ	100	2.000	200.000
1.41	Կար №1-ի ստեղծում L=0.4մ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ	75.8	2.200	166.760
1.42	Կար №1-ի ստեղծում L=0.8մ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ	35	3.500	122.500
1.43	Կար №2-ի ստեղծում L=0.4մ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ	18.9	0.300	5.670

1.44	Կար №2-ի ստեղծում L=0.5մ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ	17	3.500	59.500
1.45	Կար №3-ի ստեղծում, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը /հավաքովի ե.բետոնե խողովակների շինարարական կարեր 92հատ/	մ	736.00	0.800	588.800
	Ընդամենը ըստ բետոնային աշխատանքերի			0.000	46142.370
	Ընդամենը՝ ըստ 1 բաժնի			0	49076.586
	<b><u>2. Պատվարի կատար</u></b>				
	<b><u>Յողային աշխատանքներ</u></b>				
2.1	Պատվարի կատարի հարթեցում բուլդոզերով	մ <sup>2</sup>	5212.0	0.080	416.960
2.2	Կատարի ճանապարհի լիցքի ստեղծում հարթեցումով բուլդոզերով ավազակոպճային գրունտով, ներառյալ ավազակոպճային գրունտի արժեքը, մատակարարումը	մ <sup>3</sup>	521.0	4.400	2292.400
2.3	Լիցքի խտացում 6-տ գլխոններով 25սմ շերտի հաստությամբ, Յանցումով մեկ հետքի վրայով/ անցումների քանակը ճշտել/	մ <sup>3</sup>	521.0	0.200	104.200
	Ընդամենը ըստ հողային աշխատանքերի			0.000	2813.560
	<b><u>Մետաղական կոնստրուկցիաներ</u></b>				
2.4	Բազրիք պատվարի գագաթում, պատրաստում, տեղադրում, ներառյալ ներկումը և կանգնակների ամրացումը	տ	5.328	46.000	245.105
2.5	Պողպատե խողովակ 51x3մմ, արժեք, մատակարարում /կանգնակ L=1մ/	մ	503	2.400	1207.200
2.6	Պողպատե խողովակ 32x3մմ, արժեք, մատակարարում /բազրիք/	մ	1518	1.600	2428.800
2.7	Թիթեղ պողպատե 50x50x6մմ, արժեք, մատակարարում	տ	0.0592	1000.000	59.200
2.8	Ամրան Φ16մմ AIII , արժեք, մատակարարում / 503հատ, L=30սմ/	տ	0.238	470.000	111.860
2.9	Φ18մմ L=200մմ անցքերի գայլիկոնում գոյություն ունեցող բետոնի մեջ	հատ	503	0.300	150.900
2.10	Ցեմենտե շաղախ, արժեք, մատակարարում և լցում գայլիկոնված անցքերի մեջ	մ <sup>3</sup>	0.025587	45.000	1.151
2.11	Գոյություն ունեցող մետաղական կանգնակների և բազրիքի մաքրում ժանգից	մ <sup>2</sup>	104.9	0.600	62.940
	Ընդամենը ըստ մետաղական կոնստրուկցիաների			0.000	4267.156

	<i>Մեկուսիչ աշխատանքներ</i>			0.000	
2.12	Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ <sup>2</sup>	104.9	0.900	94.410
	Ընդամենը ըստ մեկուսիչ աշխատանքերի			0.000	94.410
	Ընդամենը՝ ըստ 2 բաժնի			0	7175.126
	<b><i>3. Սակարդակաչափ</i></b>				
	<i>Հողային աշխատանքներ</i>				
3.1	III կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով փոսորակի ստեղծումով	մ <sup>3</sup>	20.6	0.400	8.240
3.2	III կարգի բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով փոսորակի ստեղծումով	մ <sup>3</sup>	5	0.500	2.500
3.3	Փոսորակի հատակի լրամշակում ձեռքով III կարգի բնահողերում	մ <sup>3</sup>	0.4	10.000	4.000
3.4	Հետլիցքի իրականացում բուլդոզերով օգտակար հանույթի փափուկ բնահողերով /II կարգ/	մ <sup>3</sup>	12.6	0.070	0.882
3.5	Հետլիցքի իրականացում ձեռքով օգտակար հանույթի փափուկ բնահողերով, տոփանումով /II կարգ/	մ <sup>3</sup>	8.4	1.000	8.400
3.6	Ավելորդ բնահողերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 500մ թափոնավայր	տ	8.75	0.050	0.438
	Ընդամենը ըստ հողային աշխատանքերի			0.000	24.460
	<i>Բետոնային աշխատանքներ</i>			0.000	
3.7	Նախապատրաստական շերտ միաձույլ B7.5, F150, դասի բետոնով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ <sup>3</sup>	0.40	50.000	20.000
3.8	Միաձույլ բետոնե հենարան, B15 դասի բետոնից, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը	մ <sup>3</sup>	4.8	56.000	268.800
	Ընդամենը ըստ բետոնային աշխատանքերի			0.000	288.800
	<i>Մետաղական կոնստրուկցիաներ</i>			0.000	
3.9	Սակարդակաչափի տեղադրման մետաղական հենարանի կոնստրուկցիայի պատրաստում, տեղադրում / հոր մակարդակաչափի համար/	տ	0.11267	73.000	8.225

3.10	Պողպատե խողովակ 273x4մմ, արժեք, մատակարարում	մ	4.5	28.000	126.000
3.11	Թիթեղ պողպատե 500x500x4մմ, արժեք, մատակարարում	տ	0.00785	700.000	5.495
3.12	Թիթեղ պողպատե $\Phi$ 280մմ, 4մմ հաստ., արժեք, մատակարարում	տ	0.0025	700.000	1.750
3.13	Միջադիր էլեմենտ պողպատե թիթեղից, 4մմ հաստ., արժեք, մատակարարում	տ	0.0077	700.000	5.390
3.14	Անկյունակ L50x50x5մմ, արժեք, մատակարարում	մ	17.2	1.500	25.800
3.15	Խարիսխ $\Phi$ 16մմ AIII ամրանից, արժեք, մատակարարում / 12հատ, L=20սմ/	տ	0.0038	350.000	1.330
3.16	Ծխնի $\Phi$ 18մմ, L=110մմ, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1	0.500	0.500
3.17	Կողպեք, արժեք, մատակարարում և տեղադրում	հատ	1	4.000	4.000
3.18	Ավտոմատ մակարդակաչափ IGES-101, արժեք, մատակարարում, տեղադրում	լրակ.	1	450.000	450.000
3.19	$\Phi$ 273x4մմ պողպատե խողովակի վրա $\Phi$ 12մմ անցքերի գայլիկոնում	հատ	1190.0	0.050	59.500
	Ընդամենը ըստ մետաղական կոնստրուկցիաների			0.000	687.990
	Ներառյալ սարքավորումների արժեքը			0.000	435.000
	<i>Մեկուսիչ աշխատանքներ</i>			0.000	
3.20	Մետաղական էլեմենտների ներկում երկչերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ <sup>2</sup>	6.2	0.850	5.270
	Ընդամենը ըստ մեկուսիչ աշխատանքերի			0.000	5.270
	Ընդամենը՝ ըստ 3 բաժնի			0	1006.519
	Այթ թվում սարքավորումների արժեքը			0	435.000
	<i>4. Փականային շենք</i>				
	<i>Բետոնային աշխատանքներ</i>				
4.1	Տեղանքի հարթեցում բուդոզերով	մ <sup>2</sup>	121	0.200	24.200
4.2	Գոյություն ունեցող միջնապատի քանդում	մ <sup>3</sup>	1.1	11.000	12.100

4.3	Քանդած միջնապատի թափոնների բարձուն ինքնաթափ ձեռքով	տ	1.98	0.700	1.386
4.4	Թափոնների տեղափոխում ինքնաթափերով մինչև 15կմ թափոնավայր	տ	1.98	2.000	3.960
4.5	Միաձույլ B15 դասի բետոնե հենարանների ստեղծում 60x100x35սմ. չափերով , ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը	մ <sup>3</sup>	0.420	65.000	27.300
4.6	Խարամաբետոնե /B7.5/ շերտի ստեղծում ջերմամամեկուսացման և թերություն ստեղծելու համար, ներառյալ նյութի արժեքը, մատակարարումը	մ <sup>3</sup>	4.36	43.000	187.480
